րող ճանաչել նրան իր նոր կերպարանափոխութեան մէջ, իր լազի հագուստով, որովհետեւ սկզբում, երբ առաջին անգամ տեսայ նրան արաբական մինարեթում, նա զեյթունցու հագուստ ունէր եւ զեյթունցու բարբառով էր խօսում: Ինչպէս էլ որ լինէր, ես անպատշաճ համարեցի մերկացնել այն, ինչ որ նա ինձանից ծածուկ էր պահում: Բայց հաւատացած էի, որ նա ինձանից չէր թաքցնի իր հին յարաբերութիւնները քաւոր Պետրոսի հետ, որոնց վերջին սրտաշարժ գրկախառնութեանը եւ հոգեկան յուզմունքներին ես ականատես եղայ:

— Դուք այդ ծերունուն, երեւի, վաղուց ճանաչո՞ւմ էիք, — հարցրի նրանից:

— Ոչ միայն ճանաչում էի, այլ նա իմ դաստիարակն է եղել, — պատասխանեց երիտասարդը:

— Այդ խաչագո՞ղը:

— Այո՛, այդ խաչագողը:

— Ինչպէ՞ս եղաւ, որ դուք ընկաք նրա ձեռքը:

— Դա շատ երկար պատմութեան է, եթէ պատմելու լինեմ, մինչեւ լոյս չի վերջանայ:

— Պատմեցէք, խնդրեմ: Ես քաւոր Պետրոսի մասին շատ բաներ էի լսել, բայց իրան չէի տեսել:

— Երեւի, իմ մասին եւս լսած կը լինէիք:

— Այո, որովհետեւ ձեր անունը անբաժան է նրա անունից:

— Իրաւ, անբաժան է... — կրկնեց նա տխուր ձայնով:

Նա պատմեց, թէ ինչպէ՛ս պատանեկութեան հասակում ինքը դարբինի աշակերտ է եղել, պատմեց, թէ ինչ փորձանք պատահեց իր վարպետին, որի պատճառով ինքն եւս, իբրեւ յանցաւոր, կասկածի ենթարկոեցաւ եւ ստիպոեցաւ փախստական լինել, որ ոստիկանութեան ձեռքը չնկնի: Այդ միջոցին պատահեց իր նման փախստական պատանիների մի խմբի, որոնք թողել էին տէր Թոդիկի դպրոցը եւ ծածկոել էին Սաւրայի անտառներում: Այդ պատանիները, ասաց նա, Կարօն, Ասլանը եւ Սագօն էին, որոնց մօտ մնաց մի քանի շաբաթ: Իրանց մօտ յայտնւում էր երբեմն մի ալեւոր որսորդ, որին Աւօ էին կոչում, եւ նա լաւ-լաւ խրատներ էր տալիս իր մոլորեալ սանիկներին: Բայց ինքը, Մուրադը, նրանց հասարակութեան քաղցրութիւնը երկար վայելել չկարողացաւ, մի դիպուածով անջատոեցաւ այդ խումբից եւ քաւոր Պետրոսի ձեռքն ընկաւ: Այդ վերջինը առեց նրան իր հոգաբարձութեան ներքոյ,